

ՍՈՒՐԷՆ ԴԱԻԹԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, Պրոֆեսոր

Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ

Վ. Պարտիզոնու անուան հայ նոր եւ նորագոյն գրականության եւ

նրա դասասանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

danielyansuren21@aspu.am

ORCID ID: 0000-0001-7033-2041

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-87

ԼԵՈՆ ՇԱՆԹ ԵՐԵՒՈՅԹԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ ՍԵՐԳԷՅ ՍԱՐԻՆԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ Սերգեյ Սարինեան, Լեոն Շանթ, մենագրություն, գեղարուեստական մտածողություն, ժանրային անցում, քննադատություն, դրամա:

Ներածություն

Մեր այս հարցադրումի խորագիրը կարող է մեկուսի թուալ, նշանակում է մէկ թիրախի շուրջ դարձող դիպուկահարի կրակոց յիշեցնել, քանի որ առերեւոյթ բերում է գրականագէտի մեկնութեան հիմերը մէկ գրողի՝ Լեոն Շանթի շուրջ: Իրականում այդպէս չէ: Իրականում մենք գործ ունենք գրականագիտական մտքի կարկառուն դէմքի հետ, հայ գրական երկու նշանաւոր դարերը ափի մէջ բացած ու պահած, տարրալուծած ու դասդասած հսկայի հետ, իսկ նրա դիմաց՝ միտումի ու չափանիշների անգուգական վարպետն է, որը ստեղծագործական երկար տարիների ընթացքներում հետամուտ է եղել գեղեցիկի խորքային բացայայտումներին, կեանքի ու «կենսածին խոհալի» յարաբերութեան բարդ ծալքերին: Հանրագիտարանային երկու բացարձակ արժէքներ քով քովի, որոնց շուրջ փիլիսոփայական

գնահատութիւնների շրջապտոյտում հոսում է հայ գրականութեան ժամանակի գետը՝ մե՛րթ միահուն, մե՛րթ ժայռերից ջրվե՛ժի գոռ ալիքների պէս ափեր ծեծելով, ծովի բացերը նետուելու պատրաստ:

Աշխատանքի քննութեան առանցքում Սերգէյ Սարինեանի «Լեւոն Շանթ» մենագրութիւնն է: Շարադրանքը տարուած է պատմահամեմատական եւ վերլուծական մեթոդների կիրառութեամբ:

Շանթի ռոմանտիզմի ընկալման սարինեանական եղանակները

Կեանքի ու «կենսածին իտէալի» մեր նկատած ռոմանտիկական, այսինքն՝ վիպային գուգահեռը բխում է Լ. Շանթի ծրագրային «Ինչո՞ւ» քերթուածի լայնալիր բուն հարցադրումից, որը ճանաչողական շփման ելակէտ է Ս. Սարինեանի համար.

*Ինչո՞ւ կը գոռայ թափովն առիւծի
Ալեկոծ ծովը խոժոռ ժայռին մերձ.
կամ հեզամբմունջ վտակը ինչո՞ւ
իր թարմ կարկաշը կ'ողորէ անուշ,
երբ անփոյթ, կայտառ ու զուարթաչու
առաջ կը գայթի նազանքով քնքուշ.
ո՞վ կը հարցընէ եռուն ջրվէժին,
թէ ինչու անդու կը հանէ շառաչ,
մինչ սեպ բարձունքէն անդունդ կը խուժեն
փրփուր կոհակներ յորդ ու կաթնալանջ ...¹:*

Ս. Սարինեանի գիտական լեզուն «անփոյթ» կամ «զուարթաչու» չէ, «քնքուշ նազանքի» որեւէ հանգոյց չունի, աւելին՝ չոր է, բայց Լ. Շանթի քերթողական պատուհանի հետ ունի քննական խիտ աղերս. նոյնն են «խոժոռ ժայռը», «սեպ բարձունքը»,

¹ **Ճանթ Լ.**, *Առաջին հատոր, Փեղարունատական գրութիւններ. 1891–1894*, Պէյրութ, «Համագրային»ի «Վահէ Սէթեան» տպ., 2008, էջ 325:

«եռուն ջրվեժը», «անդուլ շառաչը», «փրփուր եւ յորդ կոհակները», որոնք խորհրդանշում են ընդհանուր գծեր երկուսի սեւեռումների մէջ:

Ս. Սարինեանի մօտ ձեւաորուել էր առարկայական դժգոհանք Լ. Շանթի՝ մահից անմիջապէս առաջ խոստովանած, այսպէս կոչենք, սպառողական, չբաւարարուած այն մեկնութիւնից, թէ *«քննադատութիւն ըստածը, լաւագոյն պարագային, հազիւ կը բացատրէ հեղինակի հոգին: Իսկ ընդհանրապէս՝ հակասական կարծիքներու խառնակոյտ մը կը ներկայացնէ»*, «...թէ քննադատներէս ոչ ոք կրցած է անցնիլ իմ մտածումիս սահմանէն անդին: Ամէնէն շատ՝ հասած են անոր ու այդքան միայն»²: Հայրենի գրագէտը, այնուհանդերձ, իր դժգոհանքն արտայայտում է ակնածութեան ընդմէջէն. *«Եթէ նոյնիսկ առանց վերապահութեան ընդունելու ինենք գրողի այս բնորոշումը, այնուամենայնիւ քննադատութեան իմաստաբանական անհրաժեշտութիւնը ճանաչելի է իրապէս»*³: Խօսքն աւելի Լ. Շանթին ժամանակակից եւ յետագայ մեկնաբաններին է վերաբերում: Հաստատելով, որ ինքը գիտական հզօր ներուժով քննադատների՝ համեմատաբար նոր սերնդի լծակիցներից է, Ս. Սարինեանը արդէն 90-ական թթ. սկզբին հրապարակ է նետում իր գիտական առաջադրութիւնը՝ զօրացնելով Սփիտքի գրական հայեացքի խորութիւնն ու ի հարկին խնամուածութիւնը թատերագրի, արձակագրի, նաեւ՝ փոքրիշատէ բանաստեղծի ընկալումներում:

Նախ, գրաւում է միտումի գրականութեան նկատմամբ անդուլ պրպտումի արդիւնաւորութեան հանգամանքը եւ առա-

² **Իշխան Մ.**, *Երեք մեծ հայեր*, Պէյրութ, տպ. «Էտվան», 1952, էջ 84:

Նոյն այս անբաւարարութիւնը ապրում էր «Հին աստուածներ»ի քննադատութիւնից. *«...ամէնէն լաւերն անգամ դեռ չբռնի բան մը, որ ինձի համար խոր ըլլար, որու մասին ես դեռ մտածած չըլլայի, որ ինձմէ բարձր զգայի, ըլլայ դրական, ըլլայ բացասական տեսակէտէ»* (**Շանթ Լ.**, *Երկերի ժողովածու ինը հատորով*, հ. 9 / Նամակներ եւ բացիկներ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2017, էջ 222):

³ **Սարինեան Ս.**, *Լեւոն Շանթ*, Երեւան, «Նաիրի» հրատ., 1991, էջ 3:

ջին հերթին՝ «*հայկական ռոմանտիզմ*»-ից, Բաֆֆիից ու Մուրացանից յետոյ՝ ուսումնասիրութեան այս նոր հանգրուանը, որը վկայում է նիւթի գիտական իրացման սուր հետեւողականութիւնը, ինչից Ս. Սարինեանի գեղագիտական արդար չափումներում հեռու է, այլ է Ալ. Շիրվանզադէն: Գրականագէտը համաձայն չէ Լ. Շանթի «*Վերժին*» վէպի առիթով արեւելահայ գրողի չհիմնաւորուած գնահատումին («*հրապարակախօս, կոմսիլիատոր*», «*իր կարդացած գրքերի տպաւորութիւն*»-ների⁴ մեքենայական իրացնող) եւ կանգնած է Լ. Շանթի գեղագիտական ընկալման պաշտպանութեան դիրքորոշմանը՝ ծառանալով կեղծ ռէալիզմի այն հովերի դէմ, թէ նրա «*բոլոր գլխատր հերոսները փիլիսոփայ են կամ քննադատ եւ մեծ մասամբ խօսում են ֆորմուլներով*»⁵: Աղբիւրների ճշգրտման հետքերով հայ ռոմանտիզմի տեսաբանը հակադրում է նաեւ Լ. Շանթի մահուան տարին եւ դրանից 12 տարի յետոյ Կարօ Սասունու զարգացրած այն հիմնագուրկ եզակի մտայնութեանը, թէ իբր թատերագիրը «*իրապաշտ մըն է եւ իրապաշտ կը մնայ մինչեւ իր վերջին երկը*», թէ եւ ընդունում էր «*խորհրդապաշտ պատկերներով*»⁶ հարստացումի տարրը նրա այս կամ այն գործի խորքերում: Նրա համար Լ. Շանթի «*իրապաշտ ըմբռնումը կը մնայ անխախտ*»⁷:

Առհասարակ Ս. Սարինեանը առանձին հակում չի դրսեւորել ուսումնասիրութիւնների մէջ հերոսների հոգեւոր կերտուածքի բացարձակացումի ձգտումին, ինչով շատ դէպքերում առաջնորդուել են ոչ միայն լիբանանահայ Գրիգոր Շահինեանը, այլ նաեւ նկատելի չափով՝ հայրենի գրագէտները: Դա աւելի նրանց ուղղորդել է Լ. Շանթի բնագրերում գրողի անհատականութեան

⁴ «**Տարագ**», *Թիֆլիս, իննեւորդ տարի*, 1898, 19 Ապրիլի, թիւ 15, էջ 320:

⁵ Նոյն տեղում:

⁶ **Սասունի Կ.**, *Պատմութիւն արեւմտահայ արդի գրականութեան*, Պէրութ, տպ. «Ալտաս», 1963, էջ 221:

⁷ Նոյն տեղում, էջ 215:

տարրերի ամբողջական ներհիսման միտումի փնտռություն: Գիտնականը հետեւցնում է. «Գտնում եմ, որ անհրաժեշտ է խնդիրը դիտել մի որոշ փիլիսոփայական հեռավորության վրայ եւ հնարաւորին չափ խուսափել տառացի վերագրումներից»⁸: Խօսքը կերպարից, գրական ես-ից, շատ դէպքերում՝ հեղինակային միջնորդությունից բուն Լ. Շանթի տարանջատումն է, ինչին գրականագէտը հետեւել եւ մատնանշել է իր մենագրութեան տարբեր հատուածներում, տարբեր քննական եղանակներում: Սա մի սկզբունք է, որ այնքան նկատելի չէր Բաֆֆիի կամ Մուրացանի դիտարկումների պարագային, սակայն արդէն այս գրողի մեկնութեան ճանաչողութեան հոգեբանական շերտերը առաջին գիծ են բերում տարանջատման իւրացումի պահանջը:

Նկատենք, որ յատկապէս Լ. Շանթ բացայայտելու շնորհը գրականութեան պատմութեան քննութեան որեւէ փուլում Ս. Սարինեանը մենաշնորհ չէր դիտում սփիւռքահայ կամ արեւելահայ հատուածների համար, որոնց նիւթերին, սկզբնաղբիւրներին քաջածանօթ էր եւ տարիների մէջ տեսականօրէն մշակել էր գնահատութեան իր կարգը:

Եւ ահա՛ արդինքները.

Ս. Սարինեանը շարունակում է պատմութեան փիլիսոփայութեան որոնումները: Տարբեր են գրողները, տարբեր նրանց գրական երկերում՝ ժամանակի առաջադրոյթները: Գիտնականը կառուցում է դարավերջի Լ. Շանթի գեղարուեստական մտածողութեան եւ իդէալի վերերկրային խաղարկումների յաջորդական պարբերացումները, կարգի է դնում հայեցող, բայց եռանդուն երիտասարդ անհատի տիպաբանական չափորոշիչները, որոնք քննում է «գերմանական» վեց վէպերի հանգուցային կապերում, հայադրոշմ անիրական, երազային ձգտումների, անկարելիի յետահայեաց խորը ըմբռնումով: Այնուհանդերձ, եթէ

⁸ Սարինեան Ս., *Լեւոն Շանթ*, էջ 35:

վերցնենք միայն «դուրսեցիների» մինչ Պոլիս որոնումների երթուղին եւ այն էլ արձակագրի՝ Լայպցիգի նեղլիկ պատուհաններից դիտուած, եթէ փորձենք Պոլսում նրանց՝ յատկապէս Բագրատին ու Վասակին ճանաչել հայեցող վերլուծումից, անվերջանալի սպասումից դէպի դերակատարութիւն ու հերոսների մարտնչող խօսքի յարաբերակցութեան լոյսով, գրականագէտների՝ Լ. Շանթի առումով զարտուղի դատումների բովում կ'արձանագրենք Ս. Սարինեանի քննական կարկինի՝ տիրական դարձած մեծութիւնը: Այդ նա՛ է, որ նոր հերոսի որոնման զուգահեռի ամպլիտուդը հասցնում է մինչեւ Բաֆֆի Մենակի տիպաբանական սահման՝ սկզբում անակնկալ, ապա աստիճանաբար համոզիչ վրձնախաղով: «Դուրսեցին» *հայ յեղափոխականն է*,– անակնկալ գրում է Ս. Սարինեանը՝ փորձառու գրական աչքն ուղղելով «Խենթ»ի ու «Կայծեր»ի հերոսներին, որոնք «գրական ժառանգորդութեամբ», իդէալի ու գաղափարի յաջորդականութեան ակունքներում են, ուղղորդում են այժմ նորահաս գրողին, օգնում են, որ նա «գրականութեան մէջ» բերի «նոր հերոս»⁹:

Ու հասցնում է վերակազմել ժամանակների շրջադասութիւնը ու «նոր հերոսի» ուրուագիծը. «Այդ յեղափոխականն արդէն ունի իր կուսակցութիւնը, իր ղեկավար կենտրոնը եւ իր ազգային ծրագիրը»¹⁰: Սակայն դրա կողքին հասցնում է նաեւ տեսնել հերոսի հոգեբանական երկփեղկումը, որը համարում է «էմպիրիկ մոլորութիւն», քանի որ գաղափարը կեանքի մէջ տարալուծելու ճանապարհին հերոսն ու հեղինակը անցնում են «կեանքի ու մահուան, ունայնութեան ու գոյի»¹¹ պարտադրուած սահմանագիծը: Առաւելապէս թատրերգութեան մէջ դա խիստ նկատելի ու դիմորոշ հարցադրում է, եթէ կ'ուզէք՝ որոշարկուած ճանապարհ:

⁹ Նոյն տեղում, էջ 69:

¹⁰ Նոյն տեղում:

¹¹ Նոյն տեղում:

20-րդ դարասկիզբը, ինչպէս անվրէպ նկատում է Ս. Սարինեանը, ճամբաբաժան դարձաւ Լ. Շանթի ստեղծագործական աշխարհում ոչ միայն ժանրային միջանցքներում դէպի դրաման սուր անցումով, այլ նաեւ իբրեւ գեղարուեստական մտածողութեան բարձրագոյն փուլ։ Ըստ Ս. Սարինեանի արդար դատումի՝ հարցը միայն դրամային անցումի փաստը չէ։ Յիրաւի, գտնուելով ստեղծագործական կենսանիւթի որոնումների յորձանուտում՝ Լ. Շանթն ապրում է նորոգ կենսափոխութեան հարցադրումի վերընտրութեան ազնիւ տառապանք։ Գրականագէտը զգուշութիւն է ցուցաբերում ձեակերպումներում. «Տեղի էին ունեցել նաեւ սկզբունքային հայեացքների վերադասարկումներ»¹²։ «Հոգևոր ինքնորոշման» սեւեռուն գաղափարն իր տեղը զիջում է ստեղծագործական պրակտիկայում «*եսականութեան բնագդին ...տրոհելով բարոյականութեան չափանիշները*»¹³։ Բարոյական ընկալումների համընդհանուր քայքայման ընթացքը, որ մատնացոյց էր արել Ֆրիդրիխ Նիցշէն, կասեցնում է ստեղծագործական գաղափարի դեգերումները հոգեկան վերին ոլորտներում։ Լ. Շանթն արդէն մարդուն քննում է այն պայքարում, որ մղում է նրա անեղծ ձգտումի եւ այդ ձգտումը ներսից կազմալուծող եսական մոլուցքի միջեւ։ Լ. Շանթը որսում է անհատների, ինչպէս «*Ճամբուն վրայ*» դրամայի Վահրամին, որոնք դեռ փորձում են դիմակայել, երբ փլուզում են բարոյաբանական արժէքները, մինչդեռ Մարիի նկատմամբ սիրոյ բնագդը դառնում է այլեւս եսակենտոն բնագդի արտայայտութիւն, Ս. Սարինեանի դիպուկ բնութագրումով՝ «*եսական բնագդ*»¹⁴։

Ինչ վերաբերում է «*Հին աստուածներ*» եւ «*Կայսր*» դրամաների իրականի եւ իդէականի յաւերժական բախումի փոխո-

¹² Նոյն տեղում, էջ 96:

¹³ Նոյն տեղում:

¹⁴ Նոյն տեղում, էջ 109:

փայական մեկնակետերին, նկատենք այն, ինչն անսովորն է. գիտնականը առաջնային չի դիտում հեթանոս ժամանակների եւ աստուածների հակամարտությունը՝ դժգոհելով ժամանակի քննադատների միակտուր ոգեւորությունից: Աւելին՝ նրա կարծիքով, հեթանոս շարժման պարագծից անգամ դուրս է թեման: Անակնկալ է թույլ Աբեղայի՝ Աստծոյ դէմ զայրագնայ արտայայտությունները կրօնական ենթահողից ձերբազատելու հայրենի գիտնականի ջանքը: Իսկ Վանահօր դէմ ընդվզումը բացատրում է անապատականների մէջ «*բնութեան ուխտութեան*» գերակայութեամբ, այսինքն՝ մարդու պարզ կազմախօսութեամբ, հոգու խորքերը փորփրելու ներուժով, կրքի խուժումի դէմ անել «*թուլութեամբ*»:

Աւելորդ չէ դիտարկումը, որ Լ. Շանթը Սարինեանի գիտական ճանաչողութեան սահմաններում տեսական ներկայութիւն ունի: Յիշենք մենագրութեան հետ գրեթէ նոյն ժամանակահատուածում գրուած «*Լեւոն Շանթի ազգային ծրագիրը*» (1989)¹⁵ պատմութեան փիլիսոփայութեան տրամաբանութեան փնտրտութիւնների համատեքստում, եւ աւելի ուշ շրջանից՝ «*Լեւոն Շանթի ատասպելը*»¹⁶ (1994) յօդուածները:

Եզրակացութիւններ

Գրականագէտ Սերգէյ Սարինեանի գիտական կեանքում Լեւոն Շանթը համեմատաբար «ուշ հանդիպած» գրական մեծութիւն է, անհատականութիւն, որ խորապէս հետաքրքրել է, բացել գեղագիտական նոր հարցադրումներ ու տարակարծ լուծումների նոր հնարաւորութիւններ ընձեռել, ընդլայնել է ընկերային դատումների մէջ ծրագրային խորքային, չափանիշի հա-

¹⁵ Տե՛ս **Նոյնը**, *Հայոց գրականութեան երկու դարը*, գիրք չորրորդ, Երեւան, «Տիգրան ՄԵԾ» հրատ., 2004, էջ 72–87:

¹⁶ Տե՛ս **Նոյնը**, *Հայոց գրականութեան երկու դարը*, գիրք երրորդ, Երեւան, «Զանգակ 97» հրատ., 2002, էջ 213–230:

մապատասխանող ուղղորդումներ, որոնցից մենք հազիւ հասցնում ենք անդրադառնալ Ս. Սարինեանի մի քանի հիմնարար հարցադրումի, ոչ աւելին: Այս առումով արեւելահայ ափից սփիւռքահայ ենթահողի սարինեանական բացայայտումները կան եւ մնում են գիտական ճանաչողական առաջնային պատուհաններ, խոստովանենք՝ լուազոյնը մինչ այժմ եղածների մէջ:

СУРЕН ДАНИЕЛЯН

Доктор филологических наук, профессор

АГПУ им. Хачатуря Абовяна

Заведующий кафедры новой и новейшей армянской литературы и методики ее преподавания имени Ваче Партизун

ФЕНОМЕН ЛЕВОНА ШАНТА И ЕГО ИНТЕРПРЕТАЦИЯ В НАУЧНОЙ СИСТЕМЕ СЕРГЕЯ САРИНЯНА

Резюме

В центре исследования находится монография Сергея Сариняна «Левон Шант». Подчеркивается стремление Сариняна вести внутренний критический диалог с Л. Шантом, а также полемизировать с его критиками (Ширванзаде, Каро Сасуни, Григор Шагинян). В этом контексте особенно примечателен тот факт, что литературовед выступил против научной тенденции отождествления индивидуальности автора с его героями.

С. Саринян анализировал прозу, драматургию и в некоторой степени поэтические особенности творчества Левона Шанта, показывая единый подход автора в различных жанровых проявлениях. Он особо подчеркнул тот факт, что драматургия в начале XX века стала высшей формой художественного мышления для Л. Шанта.

С. Саринян не рассматривал заслугу раскрытия Л. Шанта как монополию восточноармянской или западноармянской литературной традиции, хорошо зная материалы обеих и выработав за годы свой метод оценки.

Обращение к западноармянскому автору стало результатом длительных исследований и новым этапом для С. Сариняна после изучения «армянского романтизма», а также творчества Раффи и Мурацана. Это свидетельствует о его последовательном и глубоком научном подходе к материалу.

Несмотря на рассмотрение различных критических мнений о реалистическом направлении в творчестве Л. Шанта, Саринян справедливо утверждает приоритет романтизма.

Исследование проводится с использованием историко-сравнительного и аналитического методов.

Ключевые слова: *Сергей Саринян, Левон Шант, монография, художественное мышление, жанровый переход, критика, драма.*

SUREN DANIELYAN

*Doctor of Philological Sciences and Professor
ASPU after Khachatur Abovyan
Head of the Chair of New and Modern Armenian Literature and
its Teaching Methods after Vache Partizuni*

THE PHENOMENON OF LEVON SHANT AND ITS INTERPRETATION IN SERGEY SARINYAN'S SCIENTIFIC SYSTEM

Abstract

The study focuses on Sergey Sarinyan's monograph "Levon Shant". It highlights Sarinyan's inclination to engage in an internal

critical dialogue with Shant and to dispute his critics (Shirvanzade, Karo Sasuni, Grigor Shahinyan). In this context, it is particularly noteworthy that Sarinyan opposed the literary tendency to equate the author's individuality with his protagonists.

Sarinyan examined Levon Shant's prose, drama, and, to some extent, poetic features, demonstrating a unified artistic approach across different genres. He emphasized that, at the beginning of the 20th century, drama became the highest form of artistic thinking for Shant.

S. Sarinyan did not consider the merit of revealing L. Shant as a monopoly of either Eastern Armenian or Western Armenian literary tradition, being well-acquainted with the materials of both and having developed his own method of evaluation over the years.

His engagement with the Western Armenian author was the result of extensive research and marked a new stage in Sarinyan's studies following his work on Armenian Romanticism, as well as the works of Raffi and Muratsan. This demonstrates his thorough and systematic scientific approach to the subject.

Although Sarinyan reviewed various critical perspectives on realism in Shant's works, he ultimately and rightfully affirmed the priority of Romanticism.

The study is conducted using historical-comparative and analytical methods.

Keywords: *Sergey Sarinyan, Levon Shant, monograph, artistic thinking, genre transition, criticism, drama.*